IV
(ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ)

Առաջնորդվելով վերոգրյալ պատճառաբանությամբ և ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 27.2 գլխով, 198 և 360-362 հոդվածներով՝ Դատարանը

Վ Ճ Ռ Ե Ց

1. <<Մ.Լ.Ն. Ֆարմ>> ՍՊԸ-ի ընդդեմ <<Թիվ 8 պոլիկլինիկա>> ՓԲԸ-ի, վճճի առարկայի նկատմամբ ինքնուրույն պահանջներ չներկայացնող երրորդ անձ՝ <<ԱՄ ՄԵԴԻՔԼ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ի՝ <<Թիվ 8 պոլիկլինիկա>> ՓԲԸ-ի կարիքների համար բժշկական նշանակության ապրանքների մատակարարման ԹՑՊՈԼ-ԳՀԱՊՁԲ 23/3 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 4-րդ արձանագրությունով <<ԱՄ ՄԵԴԻՔԼ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ի հայտը ընթացակարգի 26-րդ չափաբաժնի մասով բավարար գնահատելու և ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումներն անվավեր ճանաչելու, ինչպես նաև <<ԱՄ ՄԵԴԻՔԼ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ի հայտը անբավարար գնահատելուն պարտավորեցնելու պահանջի մասին հայցը բավարարել.

1.1. Անվավեր ճանաչել ԹՑՊՈԼ-ԳՀԱՊՁԲ 23/3 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովի թիվ 4-րդ արձանագրությունով <<ԱՄ ՄԵԴԻՔԼ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ի հայտը ընթացակարգի 26-րդ չափաբաժնի մասով բավարար գնահատելու և ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումները:

1.2. ԹՑՊՈԼ-ԳՀԱՊՁԲ 23/3 ծածկագրով ընթացակարգի գնահատող հանձնաժողովին պարտավորեցնել <<ԱՄ ՄԵԴԻՔԼ ԳՐՈՒՊ>> ՍՊԸ-ի հայտը գնահատել անբավարար:

2. <<Թիվ 8 պոլիկլինիկա>> ՓԲԸ-ից հօգուտ <<Մ.Լ.Ն. Ֆարմ>> ՍՊԸ-ի բռնագանձել 11 190.00 ՀՀ դրամ՝ որպես վճարված պետական տուրքի գումար:

3. Դատական ծախսերի հարցը՝ մնացած մասով, համարել լուծված:

4. **Վճռի <<եզրափակիչ>> մասի 1.2. և 2. կետերը կամովին չկատարելու դեպքում այն կկատարվի ՀՀ ԱՆ հարկադիր կատարումն ապահովող ծառայության միջոցով՝ պարտապանի հաշվին**:

5. Վճիռն օրինական ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

6. Վճիռը կարող է բողոքարկվել միայն վերաքննության կարգով՝ ՀՀ վերաքննիչ քաղաքացիական դատարան՝ հրապարակման օրվանից մեկամսյա ժամկետում:

ԴԱՏԱՎՈՐ՝ Digitally signed by OHANYAN ARMAN 4014820192 Date: 2023.06.16 13:33:19 AMT **Ա. ՕՀԱՆՅԱՆ**